

գլխագիրն եւ միջինմետրոպեան — այնպէս որոշ յատկանիշներ ունին՝ իրարմէ մեծ տարբերութեան, որ կարելի չէ զանոնք իրարու խառնել, թէեւ երկուքն ալ երկաթագիր ըլլան: Աւելի փոքր է «փոքր երկաթագիր» կոչուածին տարբերութիւնը (Ցուցակ, Ցխտ. Ա, 5 առնուած թ. 171 ձեռագրէն՝ Ժ—ԺԱ զարուց, առ քառամանը Taf. II, 5): չիշէ խոսելով գլխագիր երկաթագիր Ե յեականան այս տեսակն, բայց շատ մանր, թէեւ գրերու ոմանց դիրքը քիչ մը կը տարբերի. եւ ամբողջն այնպէս է՝ որ շատ անգամ կարծես զի Բուլղէրի երեւոյթ կ'առնու: Վարժ աչք մ'այս ալ դիւրու կը զանազանէ առաջիններէն, որ ըստ այսմ երկաթագրի երրորդ մէկ՝ բայց ոչ էական տարբերութեամբ՝ տեսակը կ'ըլլայ:

Սակայն ասով չի լինիր միջին ձեւերու խումբը: Քարամանցի քով կը պակսի էական տեսակ մ'ալ, այն՝ զոր Անյոսէ ֆէր կոչած ենք, իբրեւ այն ձեւն որ երկաթագրէն բոլորգրի անցնելու շրջանը կամ կեդրարանափոխութիւնը կը ցուցնէ: Արդէն անցման շրջանի վերաբերելով՝ ինքեին կը չտեսնի որ բազմաթիւ աստիճանաւորութիւններ ունենալու է այս տեսակն: Մեր Ցուցակին մէջ երեք աստիճանաւորութեանց օրինակներ յառաջ բերած ենք նմանահանութեան: Ասոնց երկուքը Անյոսէ եւ Բուլղէրի են, այսինքն՝ գիր մ'որ առաջին տեսակն միջինմետրոպեան երկաթագիր կ'երևայ բազմաթիւ գրեր նոյն ձեւովն ունենալով, եւ սակայն խառն է բոլորգրով. օրինակի համար «առ զնորսիկն մարգարէացաւ» բառերու մէջ զուտ բոլորգիր են ամէն «ա» տառերը, նոյնպէս «կ», «գ», եւ «ց» միւսները միջինմետրոպեան. (տես Ցխտ. Ա, 6 առնուած ԺԳ զարու ձեռագրէ մը՝ թ. 240). եւ Ցխտ. Բ. 7՝ առնուած թ. 3 ձեռագրի խառագիրներէ: Երրորդը՝ Անյոսէ Բուլղէրի է, այսինքն գիր մ'որուն տիրող ձեւերն բոլորգրի են, միայն խառն պլիւսայլ տառերու միջինմետրոպեան ձեւերով, այսպէս հ, շ, շ, պ եւն (տես Ցխտ. Բ. 8, առնուած թ. 273 ձեռագրէն): Անցման ձեւերու իբր օրինակ՝ ի միջի պլյոց՝ երկու գեղեցիկ ձեռագիր կայ մեր մասնաւորարանի մէջ. մին յիշեալ թ. 273 ձեռագրին գրումն ընծայութեան 212 (=1277) տարին գրուած. երկրորդը թ. 56 եւ 351 կամ կրկնագիր Ագաթանգեղոսի վրայի երկրորդ անգամ գրութիւնը՝ ԺԳ զարէն: Չանց կ'առնեմ բուն տեսակները եւ անոնց անունները:

Բուլղէրի բազմաթիւ եղանակաւորութեան յիշել, որոնք քիչ չեն եւ որոնցմէ 7 պլիւսայլ գրուութիւնք տես մեր Ցուցակի մէջ, Ցխտ. Բ. 9—15՝, ինչպէս նաեւ Դուրդէրի, Էւրդէրի՝ հին ու նոր պէսպէս խաղոյ տեսակներով, ի մասնաւորի նոսրի եւ շղագրի խառնուրդ մը, եւն: Ասոնք համեմատաբար նոր ժամանակի երեւոյթներն ըլլալով՝ միւսներուն չափ Եանրակշիւութիւն չունին հնագրական խնդիրներուն մէջ:

(Ըստ Բուլղէրի)

4. 8. 8.



Գ Ր Ա Վ Ա Ն

ԳՆՑՄԱՐԻԹԻՆ ՀՈՅ ԼՐԱԳՐԻԹԵՆ
1860ԷՆ ՄԻՆՉԵԻ ՄԵՐ ՕՐԵՐԸ

(Ըստ Բուլղէրի)

7. Թ. Թ. 2 Ե Ի Կ

[[մայիսի 28-ին Կ. Պոլիս 1861—2:

Խոյն. Գ. Պալիսան

ՃԿ. Ք. Գիւրքանմ:

Գրիգոր Պալիսան պատանին 1861

Յնր. 1 թուականաւ քառածալ շորս լիցիւ է բազմաթիւ արմատներէ մը հրատարակեց 1860 Գեփտի օրէնքներ թողնելի, Եւրդէրի ուսուցչականութեան, որ նպատակ ուներ «Մարդկային ազգի բարոյք կեցութեանը վրայսք ճանել, նեցուկ ըլլալ ընդդէմ ամենայն անարարութեան ըմբռնութեանց, տղայոց շահաւտ խրատներ տալ, պարզ եւ յստակ ոճով. քանի մը մանր նիւթեր աւանդել, որք են վարդապետական, բժշկական, ռաժկական շինու լիցուներ, զուարճալիք, առածք, հանելուկ» եւ այլն եւ այլն, ինչ որ վերջապէս կայ խնացական եւ նիւթական աշխարհի մէջ՝ բոլորովին տղայական ըմբռնմամբ:

Ցարեկան գինն էր 40 դրուշ:

Առաջին տարին կանոնաւորապէս հրատարակեցաւ 12 թիւ: Բ. Ցարին դիրքը փոխուեցաւ մեծ ութանկով (4 թուշով) եւ ամէն ամսոյ 8ին եւ 22ին կը հրատարակուէր, տարեկանը 60 դրուշով: Այս տարւոյ ճակատը կը զարդարէր կաշուոյ եւ դափնեւ ճիւղերէ պատկեալ թուշուն մը: Թողնու անուան յաւելուածն էր 2 անգամ անդրաւորութեան: Այս տարին ձեռք ծանօթ է միայն երեք թիւ (8 եւ 22 Յնր. եւ 8 Փետր. 3):

1 Ցն. Ցուցակ, Ցխտ. Բ. 10 ձեւն առնուած թ. 1318ի գրուած ձեռագրէ մը. Բ. 14 ձեւն 1812ին գրուած օրինակ մը, եւն եւն:

2 Առաջին Բ. 1862, թ. 668, 9:

դակութիւնն ալ բոլորովին քաղաքական եւ ազգային լըեր էին: 1865ին Յուլ. 17էն մինչեւ Օգոստ. 14 ընդհատեցաւ հրատարակութիւնն, որմէ ետեւ նոյն կերպով շարունակեցաւ:

Զ. Տարին (1866) Կէլէի նոյն կերպով կը հրատարակուէր մինչեւ Ապր. 30 (թ. 119): Այնուհետեւ երկու խմբագիրներն իրարմէ բոլորովին անշտանցան: Տ՝ Բ. Իսթիւնեան առ ժամանակ մի լրագիրը դադարեցնել ուզեց՝ բժշկական զբաղմանց պատճառաւ. իսկ Հ. Ս. Ալաճաճեանն ուզեց թերթը շարունակել, եւ բոլորովին իւր վրայ առնլով խմբագրութիւնն ու հրատարակութիւնը թերթին անունը դրաւ. Փռնըլ Լոպէր Կալաթալէ, Կալաթալէ Եւ Կալաթալէ իբրեւ Կէլէի վեցերորդ տարւոյ շարունակութիւն, եւ այս պատճառաւ Փռնըլի առաջին թիւն «Զրջան վեցերորդ, Թ. 120, ով սկսաւ եւ մինչեւ ցայսօր կը շարունակուի նոյն խմբագրով եւ հրատարակչով: Մենք Փռնըլն իբրեւ զատ լրագիր՝ իւր յատուկ տեղը պիտի դիտենք: Բայց Կէլէի ստով բոլորովին չգաղտնացաւ: 1867 Յուլիս 1ին կիլիկիայ, հոգեւ Գաթալ, Կալաթալէ Եւ Կալաթալէ անուամբ նոր շրջան սկսաւ, իբրեւ «Լատար Ե. Թիւ 1», Տ՝ Բ. Իսթիւնեան իւր Կէլէի նոյն զարձակ առաջին դիրքը եւ զուս բժշկական եւ առողջապահական բովանդակութիւնը տուաւ: Կէլէի այսպէս առնալ առին (48 երես, բաժանորդագին 20 դր.) հրատարակչութիւնը՝ շարունակեցաւ մինչեւ 1869 Յունիս 11 (Ա. եւ Բ. Հարս, 24 թիւ):

1869 Յուլիս 1ին այս շրջանին Գ. Տարին հրատարակեցաւ. քիչ մ'աւելի փոքր դիրքով՝ իբրեւ շաբաթաթերթ, 16 երեսէ բաղկացեալ, 2 մէճիա բաժանորդագինով, նոյն բովանդակութեամբ:

Դ. Տարին 1870 Յուն. 1էն մինչեւ Ապրիլ՝ 14 թիւ ունեցաւ: Նոյն տարւոյ Յուլիս 1ին Հարս. Ե. Թիւ 1 սկսաւ՝ խոստանալով որ Դ. Տարւոյ պակաս թիւերն կ'ամբողջացնեն հետզհետէ, որ կարծես չկատարուեցաւ: Իսկ Հարս. Ե. ին խմբագիր-տնօրէն կարգեցաւ մեր ընթերցողաց ծանօթ Ա. Մուրատեան՝ երբեմն խմբագիր-հրատարակիչ Հայրէֆէր, Փաշէլ եւ Աբա-Էնի լրագրաց, իսկ ինք Տ՝ Բ. Իսթիւնեան էր հրատարակիչ եւ աէր, եւ յօդուածագիր առողջապահական մասին Կէլէի թերթին այս ժամանակ ամիսն հինգ անգամ կը հրատարակուէր (16 երես, բաժանորդագին 1½ մէճիտ): Սոյն տարւոյ 7՝ Թուոյն վերջին (Օգոստ. 7) «Խմբագիր-Տնօրէն Ա. Մուրատեան, արգէն

վերցուած էր, եւ Իսթիւնեան կը ստորագրէր «Տէր եւ խմբագիր», Թերթին այս տարին նախորդ Դ. Տարին տարբերութիւն չունէր: Այս Ե. Տարւոյ մեզի ծանօթ վերջին թիւն է 9 (Օգոստ. 19):

1871 Մայիս 1ին նոր շրջան, Հարս. Ա. Թ. 1 հրատարակեցաւ իբրեւ շաբաթաթերթ, որ փոքրիկ ութնասլ 32 երեսէ կը բաղկանար: Այս շրջանէն ծանօթ է մեզի 12 թիւ (1871, Յուլիս 31) 336 երես: Խմբագիրը նոյն, 9՝ Թուէն սկսեալ տնօրէն Կ. Խաղամաճեան: Ասոր ծրագիրն ու նիւթն է՝ Կալաթալէ, Կաթալ, Կաթալ, Կաթալ: Թէ յաջորդ տարիները լայս կը տեսներ, ծանօթ չէ:

1874 Սեպտ. 1ին Կէլէի մի անգամ եւս կը կենդանանայ, եւ կը հրատարակուի Տ՝ Բ. Մ. Իսթիւնեանի ձեռք իբրեւ երկշաբաթաթերթ Ա. Տարի, գրեթէ միայն բժշկական բովանդակութեամբ, (միայն կը գտնենք [1874 թ. 5] «Այն ամիրայեանին Հայոց առուստ հրովարտալը» ք. թւին. 660ին, որ եւ Բաւալ-Կի մէջ [1848 էջ 212] հրատարակուած էր ուրիշ օրինակէ մը): Այս շրջանէն մեզի ծանօթ վերջին թիւն է 9 (1875 Յուն. 15):

Կէլէի ժամանակին ամենալաւ խմբագրուած թերթերէն մին է. մասնագիտական բժշկական յօդուածներն ժողովրդեան պիտոյից յարմար, բազմակողմանի եւ պարզ էին. եւ տարակոյս չկայ որ ասոնք իւր ընթերցողներուն մեծապէս օգտակար եղած են: Ազգային լրերն առատ. յայտնուած կարծիքներն ծանրախոհ եւ լուրջ էին, եւ թերթն առ հասարակ յարգուած էր ամէն տեսակ կողմնակցութիւններէ: Կէլէի խմբագրին մէջ մեծ արդիւնքն այն եղաւ՝ որ ազգին գրամական նեղուած թիւները բառնալու համար 1869ի Կէլէի մէջ առաջարկեց՝ որ ամէն հայ մէկ տարի միայն տարեկան 12 դր. վճարէ ազգային գանձարանին, որմէ կ'ազդուած գումարով 1. Պատրիարքարանին պարտքը (1 միլիոն դր.) վճարուի, 2. Կ. Պոլսոյ մէջ գաւառացի ազգայնոց համար դասատու պատրաստելու նպատակաւ գիշերութիւ վարող մէջ հիմնարկուի, եւ 3. Պատրիարքարանին եւ Հիւանդանոցի ցաւալի վիճակը բարւոյրուի: Այս առաջարկութիւնն՝ հակառակ ոմանց ընդդիմութեան, Սրբոյն խորմեանի Պատրիարքութեան ժամանակ ընդունուեցաւ եւ ըստ մասին գործնապարհեցաւ:

Տ՝ Բ. Մ. Իսթիւնեան նաեւ ժամանակին ազգային գործոց մէջ գլխաւոր գործիչներէն էր:

Յ. Վ. Ղ. Ի Կ

Ամիսն երկը անգամ, Զմիռնիս, Կ. Պոլիս,
1861—7 :Խմբ. Ա. Հայկունի և Գ. Զիլինկիրեան,
Տիպ. Տիպոգրաֆ. Ենմ:

1861էն սկսեալ նոր Վահմանդուլթեան հետեւութեամբ ի Կ. Պոլիս եւ ի Զմիռնիա հին ու նոր գաղափարներ ու սկզբունքներ, հինը խելու եռանդնոսներ եւ ասոնց դիմաց հնոյն կառչած կպած անձինք, ինքնիշխան վարչութեան վարժ՝ եւ դիմացը բարեկարգութիւն պահանջողներ ստիպուած էին իրարու հետ գործել. եւ անհամաձայնութիւնք շուտով զայն րացան եւ երկու կողմը ջերմ կռիւ կը մղէր իրարու յաղթել ջանալով: Ասոր հետեւութեամբ այս եւ յաջորդ տարիներ տասնեակներով ազգային թերթեր լոյս տեսան, որոնց մեծագոյն մասին խմբագիրներն ազատութեան ռոմով հարբած՝ իրրեւ իրենց համար նոր աշխարհ մը մտած՝ յարմար եւ անյարմար եղանակներով սուր կը ճգնեցնէին, Կիւնային կ'ելլէին: Այս վաղմտական թուականի թերթերն ասով իրենց սեպհական յատկութիւն մ'ունեցան: Բայց եղան ասոնց մէջէն նաեւ այնպիսիներ, որոնք աւելի ձրիւք եւ կրթութեամբ օժտեալ՝ գիտացն ժամանակին պիտոյից օգնութեան հասնիլ եւ օգնել ազգին այն ճգնաժամին մէջ: Այսպիսեաց կարգէն էր եւ Գրիգոր Զիլինկիրեան Ծաղիկ անուն հանդիսին խմբագիր-հրատարակիչը:

1861 Յունիսի սկիզբը՝ Յուլիս 1, թուականաւ սկսաւ հրատարակուիլ ի Զմիռնիա Ժաղկի, հանդէս Գառնիօն, որ ամէն ամսոյ 1ին, 10ին եւ 20ին պիտի հրատարակուէր: Թերթին «տնօրէն եւ խմբագիր» կը ստորագրէին Արմենակ Հայկունի եւ Գ. Զիլինկիրեան: Ի սկզբան գլխաւոր գրողն էր Ա. Հայկունի: Թերթը կը սպուէր Տէտէեանի տպարանը, զիբը՝ մեծ քառանկալ թերթ մը (4 թուղթ), բաժանորդագին՝ 40 զըշ: Ասոր նիւթերը պիտի ըլլային «Ազգային, իմաստասիրական, բանաստեղծական եւ բանագրատական»¹, Թերթին Յայտարարութեան մէջ կ'երեւար «ազատամիտ եւ ճամբատասեր ոգի մը խոհեմութեան եւ խաղաղասիրութեան հետ միացեալ»², Խմբագիրը կը խոստանային «կրօնական խնդիրներու չխառնուիլ, որեւիցէ կուսակցական գործին ներքին չմտնէ»³ Սակայն

յայտնի էր որ ազգային թերթ մը 1861—2ին Կ. Պոլսոյ, Զմիռնիոյ եւ Նիսիսաղէմի ներքին, հասարակական եւ կրօնական խռովութիւններուն ու խառնակութիւններուն չմասնակցիլ չէր կրնար:

Ծաղիկի առաջին վեց թուերուն մէջ սկսան երեւալ ի նպաստ Վահմանդուլթեան յօդուածներ, «խորհրու ազատութիւն» եւ մանաւանդ ժամանակակից թերթերու կարծեաց «բանադատական» տեսութիւններ ու սրբագրութիւններ: Դառն փորձէ անցած տպարանը թուական 3^{րդ} թուոյն վըպ ապել՝ թէ «Տպարանը պատասխանատու չէ Հանդիսիս պարունակութեանը»⁴, Այս կարգի գրութիւններ Կ. Պոլսոյ հայ թերթերու մէջ մինչեւ այն ատեն գրեթէ երեւցած չէին, իսկ Ծաղիկի առաջին թուերը գրեթէ միայն այսպիսի խայթիչ յօդուածներ էին: Եւ հաջ Զմիռնիոյ հայ հասարակութեան «յետադէմ կուսակցութիւնը» իւր սովորական գէնքը ձեռք առաւ, եւ տեղական կառավարութեան ձեռք օգոստոսին արգելեց թերթը, 6^{րդ} թիւը լոյս տեսնելու ետեւ, «կանոնաւոր հրամանագիր» չունենալուն պատճառաւ: Դոյն ամսոյ վերջն Գր. Զիլինկիրեան արգէն ձեռք բերած էր նոյն հրամանագիրը, եւ 7^{րդ} թիւը լոյս տեսաւ:⁵

Ա. Տարւոյ Ա. Շրջանը 18 թուով փակուեցաւ: Բ. Շրջանը 1862 Յուն. 1ին սկսաւ՝ ծաղկեղաղ ոգիներով պծեալ ճակատով մը, որ եւ կանոնաւորապէս հրատարակեցաւ: Բ. Տարի, Գ. Շրջանը, որ (1862) Յուլիս 1ին սկսաւ, նոյնպէս կանոնաւորապէս շարունակեցաւ: Այս տարւոյ Սեպտեմբերին Ա. Հայկունի թերթին խմբագրութիւնը թողուց, եւ Ժնոյ միայն Գր. Զիլինկիրեան (1863) Մարտ 10 (62^{րդ}) թուով Ծաղիկ երկրորդ անգամ խափանուեցաւ՝ դարձեալ հրամանագիր չունենալուն պատճառաւ:⁶ զոր արգէն մի անգամ ստացած էր, կամ ճշգրտոյն՝ Զմիռնիոյ Առաջնորդին դէմ յօդուած մը հրատարակելուն պատճառաւ:⁷ Դոյն տարւոյ Դոյ. 1ին՝ ազգային առժամանակեայ վարչութեան միջնորդութեամբ եւ Բարձրագոյն Դրան հրամանաւ 63^{րդ} թիւն հրատարակուեցաւ՝ բանի մը խոհական պայմաններով՝ ըստ եպարքոսական յանձնարարական նամակին զոր Կ. Պոլսոյ ազգային վարչութիւնը խնդրեց եւ յաջող զեցաւ ձեռք բերելու:⁸ Այս առթիւ կը գրէր

¹ Միւլիս, 1861, Թ. 497:² Անդ:³ Միւլիս, Ար. 1861, Թ. 650:⁴ Միւլիս, 1861, Թ. 1:⁵ Միւլիս, Ար. 1863, Թ. 698:⁶ Միւլիս 1863, Թ. 63:⁷ Միւլիս, Ար. 1863, Թ. 714:

Մ-ի (1863 թ. 613), "Ծաղիկն իր հրատարակած Նիւթերուն ընտրութեամբ, հմուտից յօդուաններովը, մարտը եւ վառվառն ոճովը եւ խոհանութեան բայց անկեղծ ազատամտութեամբը՝ հայ գրականութեան ասպարէզին մէջ երեւցող ուսումնական լծերը բերուն առջիններէն մէկն ըլլալով՝ ազգային մտաւորական զարգացման նպատաւոր ծառայութիւններ կրնայ ընել:"

1864ին Յուլիս 1 (87)՝ Թիւր լոյս տեսնելէն ետեւ՝ Ծաղիկ իրորդ անգամ խափանուեցաւ առ ժամանակ մի. սակայն խմբագիրն այս շրջանին պակաս թուերն յետոյ յաւելուածներով ամբողջացուց: Սոյն տարւոյ Հոկտ. 20ին (թ. 38) լոյս տեսաւ Գ. Տարին վեցերորդ շրջանով, եւ խմբագիրն ուղեց գաղթեցնել լոսգիրը. բայց այլոց խնդրանաց համեմատ եւ հակառակորդաց ցոյց ընելու համար՝ Նոյ. 1ին Գ. Տարին սկսաւ իրեն շարունակելով:

Ծաղիկ Նոյն Գ. Տարւոյ 107՝ Թուով (1865 Մարտ 1), Զմիւռնիկ կատարուած պարահանդիսի մը վրայ իրեն ուղղուած "Ֆէն-ժաններու պարահանդէսը, վերնագրով նամակ մը կը հրատարակէ: 1861էն ի վեր Զմիւռնիկ կազմուած "Նուպետաց" կողմէն հակառակ կուսակցութիւնը եւ իրենց զինքը վատահամբաւ համարողը՝ այս նամակին պատճառաւ Ծաղիկի խմբագիրը Մեսրոպեան վարժարանի (տաճկերէնի) դասաւանդութենէն կ'արձակեն, եւ Մարտ 20ին զինք կատարութեան ձեռքը 28 օրուս քանի որ դատապարտել կու տան: Մ. Մամուրեանի, որ այն ժամանակ Կ.Պոլսոյ Պատրիարքարանի գիւնանպետն էր եւ Ծաղիկի գործակից ("Վրդը", Հայկական նամակների), ետեւում Սպարդաւանի էր. Զմիւռնիկը ինքուր-իւն գաղլը. լոսգիր խմբագիրն միջնորդութեամբ՝ Գր. Չիլինկիրեան հինգ օրէն քանակէն կ'արձակուի: Եւ որպէս զի այնուհետեւ այսպիսի անհանդիմանելի ազատ մնայ՝ Մ. Մամուրեանի խորհրդովը 1865 Ապրիլ 1ին 107՝ Թիւն ի Կ.Պոլսոյ Արամեան-Արեւելեան տպարանը տպագրել տուաւ, ուր եւ լոյս կը տեսնէր լծերը բաւական աստի: Իսկ ինքը մնաց Զմիւռնիկն եւ լծերը համարատու նշանակեց ի Կ.Պոլսոյ զօրահայտ Սահմանեան: Ապրիլ 1 եւ 15 (109, 110) Թուերուն ծակատը կը զարգարէր Վափորի գեղեցիկ պատկերը: Այսուհետեւ երկարատեւ գաղարում մ'ունեցաւ

Ծաղիկ, եւ թ. 111 իրեն "Ե. Տարի. Ը. Շրջան" 1866 Յնր. 1ին հրատարակեցաւ՝ առանց ծակատի պատկերին:

1866 Յուլիս 15ին (թ. 123) Ծաղիկ (Ե. Տարի) Թ. Շրջանն սկսաւ ի տպարանի թ. 6. Քիւրճեանի. ուր այն շրջանի 12 թուերը՝ խմբագիրն հեռագրութեան պատճառաւ քիչ մ'անկանոն հրատարակուեցէն ետեւ, Զ. Տարի՝ Ժ. Շրջանը (1867, Մայիս 15. թ. 135) փոխագրեցաւ դարձեալ ի Զմիւռնիկ՝ հետեւեանի տպարանը: Խմբագիրը տեսաւ որ Զմիւռնիկ այժմ փորձառու եղած էր եւ ոչինք հանդարտած. հանգրժն այսու խոտաւազ գգուշանալ տեղական խնդիրներու վրայ յաճախ խօսեցէն: Այս շրջանին վերջին Թիւն է 146 (1867, Նոյ. 1) Սոյն թուով Գ. Չիլինկիրեան "Գամբանական" վերնագրով ծանոյց Ծաղիկի վերջնական դադարումը "ի չօլե քաշալերութեան":

Ծաղիկ իւր ամբողջ կենացը մէջ գրեթէ զբաղեցաւ ժամանակակից խնդիրներով. թէեւ այս խնդրոց մէկ մեծ մասը լծերին կամ խմբագրին կը վերաբերէին, քան թէ հասարակութեան: Իբրեւ խիստ սահմանադրական՝ բուռն մարտ մղեց հակառակ կողմակցութեան հետ ընդարձակ, ջղուտ եւ իմաստաւոր յօդուածներով: Իւր տեսութիւններն ողջ էին. հակառակորդաց հետ վիճելու մէջ խիստ, կծու, բայց եւ անկողմնակալ, անաչառ. եւ այս պատճառաւ համակրութիւն գտած էր ժամանակին ընտրելի լոսգիր լծերը, ուսեւը երիտասարդներէն եւ յառաջագիտականներէն: Ազգը կը դիտէր իրեն մի մարմին՝ առանց կրօնի տարբերութիւնները նկատելու, որ այն ժամանակ թէ այս տեսութիւնն ունենալն էր թէ Նոյնը պաշտպանելը դիւրին չէր. իւր տեսութիւնները պաշտպանելու մէջ աներկիւղ էր եւ անսասան: 1861—67 լծերը շորս հինգ անգամ խափանել առին հակառակորդները, սակայն Գր. Չիլինկիրեան միշտ Նոյնն էր մինչեւ վերջը: Ափսոս որ շուտով վերջացցոց լծերը՝ քանի որ մտք ու գրչով եւս աւելի յղկուած ու հասունացած էր լծերին վերջին տարիները, եւ մեծապէս օգտակար կրնար ըլլալ հասարակութեան իրեն հրապարակագիր:

1 Վեֆ-իսի իւր-իսի, 1865 թ. 30, 31: Արեւ. Ար. 1865 թ. 750:

1 Վեֆ-իսի, 1867, թ. 6: Մ-իսի 1867 թ. 825 (Գեղ. 2):
2 Ծաղիկ, 1862, թ. 19:

10. Վ Ե Ր Պ

Ամսթիվ թիվ 4. Պրիմ, 1861—2:
Խոյ. Թ. Պ. Պնոնանց ն. Ս. Բայսնդան
Զյ. Թ. Յ. Քիրքմեհան, նմն:

Ինովմաս Պ. Պեռեանց եւ Սարգիս Բարսեղեան միասին՝ 1861 Յուլիս 1ին առաջին թիւն հրատարակեցին ի տպարանի Թ. Յ. Քիրքմեհանց ի Կ Պրիմ՝ վարդ, Հռոմէա Մեքսիկեան անուն մեծ քառածալ (4 թուղթ) ամսթիւն թի մը, որուն բաժանորդագրին էր 60 ղըշ.։ Այս թիւն ալ իւր նմաններուն հետ պիտի հրատարակէր «ուսումնական եւ բանասիրական յագուածներ, այսինքն կատարելութիւններ, թէ զբարառ եւ թէ աշխարհարառ պատմական ու բանաստեղծական վիպասանութիւններ, ոտանաւորներ, երգեր, զանազան ազատ թարգմանութիւններ, բարոյական եւ իմաստասիրական իրաւաներ, զուարճալիք, հանելուկք եւ երբեմն բանադատութիւնք» եւն եւն։

Թիւրթիւն 8^ր թուէն (1865 Փետր. 1) սկսեալ կը տպագրուէր Յ. Միհհէտիսեանի տպարանն։

Վարդիս Ա. Տարին (1861—2) 12 թիւ ունեցաւ, իսկ Բ. Տարին 4 թիւ։¹

(Հրատմ.-Խոյ. Թ.)

Հ. Գ. Գ.



Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ԵՂԻՍԱՅԵԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԸՆԾՈՆԵԿԱՆ
ԿՆԵՆՑ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԿԵՐԱԳՈՐԾԻՐԵՆՆԵՐ
(Հրատմ.-Խոյ. Թ. Կ. Գ.)

Պ. Խաչ օրհնելու կամ օծելու համար՝ չորս սմագ. — Մկրտութեան համար, երեք սմագ. պէտք է. սակայն թէ որ քնքասայլն աղքատ է 50 ստակ բաւական է։ — Դ. Մատաղ կամ ուխտը՝ ներեալ է։ Բայց հարկ է որ տան տէրը նուիրմունքը կարգի բերէ ու սեղանի վրայ տեղաւորէ. որ մարդիկ եկեղեցիէն գալուն պէս, սեղանի վրայ գտնեն զան։ Մատաղին տէրը՝ քահանային մէջ հունգարական ֆիօրին վճարելու է։ — Ե. Առաջին կարգի թաղման համար, երկու հունգարական ֆիօրին — երկրորդ կարգին համար, չորս. իսկ երրորդ կարգին համար, երկու սմագ. պէտք է վճարել։ Եղայրութեանց

երիտասարդներուն՝ որոնք փոքր կը փօրեն, վճարելու է առաջին աստիճանի մարդը՝ երեք հորհօշ,¹ երկրորդ աստիճանինը՝ երկու հորհօշ, իսկ երրորդինը՝ մէկ հորհօշ, բայց թաշկինակ տալու հրաման չկայ, թէ որ երկրորդ ընկերութիւն մըն ալ գտնուի, այն աստի թաշկինակն անոր տրուի։ Եթէ մէկ եղայրութեան անդամները տունը չգտնուելով, փոս չկարենան փոքր, այն աստի մէկալ եղայրութիւնը կրնայ փոքր փօրել։ Բայց այս դէպքին մէջ, ստակն երկու ընկերութեանց մէջ բաժնուի։ Երբ որ եղբայր տունն են, մէկալ եղայրութիւնը հոն տեղ ամենեւին գործ չունի։ — Զ. Բառաստեղծին համար վճարելու է առաջին կարգի մարդը՝ ութը հունգարական ֆիօրին, երկրորդ կարգինը՝ վեց, իսկ երրորդ կարգինը՝ չորս ֆիօրին։ — Է. Նշանատախին համար, երիտասարդները վճարեն, եթէ առաջին կարգի մարդիկ են, վեց ֆիօրին, եթէ երկրորդ կարգի մարդիկ են, չորս ֆիօրին. իսկ երրորդ կարգինները՝ երկու ֆիօրին։ Թէ որ կամք մէկը կամ մէկալն աւելի տալ ուզենայ, ազատ է, արգելք չկայ, կրնայ ընել։ — Ը. Ընկերութիւն, իր վարչահանրով ծառայութիւն ընէ փեսային, մինչեւ որ պսակէն տուն գան։ Սուրբ իրմէն չառնուն։ — Թիւր համար, ալ այնուհետեւ վճարք չըլլայ։ — Թ. Պատկուելու գացած ժամանակ, փեսան՝ հարսին ձեռք տալով չտանի զինք եկեղեցին, հապա տան երիտասարդացն, իսկ հարսը տան տիկնայ հետ երկայ։ Եկեղեցւոյն մէջ հարսն ու փեսան տթոռի վրայ շնտին։ Հարսին ձախառք չպագենն, հապա միայն, «Աստուած շնորհաւոր» ըսնէ։ Իրիկուն, կերակրոյ տանն, փեսան կանանց հետ շնտի սեղան, հապա միայն ծառայութիւն ընէ. վասն զի այսպէս կը վայելէ։ — Ժ. Սեղանին ներկայ չեղողներն ալ կրնան անոր մասնակից ըլլալ։ Բայց, թէ որ սեղանին տէրն երիտասարդաց ձեռք կ'առնէ խրկել մէկուն կամ մէկալին բան մը, պէտք է որ իր վիճակին համեմատ՝ չորս, կամ երեք սմագ տայ։ Ասոր վրայք, զուարճ փողոցի վրայ ոչ առաջնորդի կամ մեծ մարդու մը, եւ ոչ ալ սեղանի վրայ մէկու մը բան մ'ըսեն. բայց տունը կրնան ըսել։ Որուն որ կը խրկուի կերակուրն՝ անիկայ ապա վճարքը. — ու պարգեւ ընդունողն որուն որ կ'ուզէ, բաժնէ այն կերակուրեան, օրով հետեւ իրեն խրկուած են։ — ԺԱ. Այսուհետեւ հրաման չկայ հաց կցնել ընել, կամ ալիւր մաղել, կամ հինայ

¹ Գէթ այստեղ ծանօթ է մեզ Արթ. Տ. Յ. Քէչյւ. Մկրտանի մէկ ցուցակին։

¹ Փոքր սուղի տեսակ մըն է։